

ԲԱՆԱՍՏԵՂԺ ՎԱՅԱՆ ՄԻՐԱՔԵԱՆ

(Նրա գրական գործունեության 40ամեակի առթիւ)

1. Բանաստեղծը

Այսօր լրացաւ 90ական թուականների Հայ բանաստեղծութեան յայտնի դէմքերից մէկի՝ Վահան Միրաքեանի գրական գործունեութեան 40-ամեակը:

40 տարի: Դա մի խոշոր պատճառըն է, որի ընթացքում նա լուռ ու մունջ, իր ճանկավարժական գործունեութեան հետ զուգընթաց, ծառայել է Հայ գրականութեանը:

Շատ բան չի գրել նա, ծանաւանդ «Լալուարի Որսը» մեծ պոէմից յետոյ լռել է երկար ժամանակ եւ երբեմն միայն գրական այս կամ այն հանդիսում վրձինել է բանաստեղծական փոքրիկ նկարներ եւ դրամաներ: Սակայն այն մեծ արձանը, որ նա բանդակել է, Հոգեբանական-սոցիալական այն տիպերն ու երեւոյթները, որ պատկերել է եւ բնութեան շքեղ այն տեսարանները, որ նկարել է իր պոէմում գեղարուեստագէտի վարպետ վրձինով, ինքնին բաւական են, որ գրաւի նա իր ուրոյն տեղը մեր բանաստեղծական գրականութեան պատմութեան մէջ:

2.— Վահան Միրաքեանի գրական գործունեութեան ամբողջական պատկերը:

Գրական ի՞նչ գործեր է թողել սակայն Վ. Միրաքեանը, ի՞նչ է երգել, վրձինել 40 տարուայ ընթացքում: Անհրաժեշտ է նրա գեղարուեստական ողջ ստեղծագործութիւնը մի շրջանակի մէջ առնել եւ գրական հրապարակի վրայ դնել. ծանաւանդ այսօր, երբ նա կանգնած է իր 40ամեակի շէմքին:

Նրա գրական գործունեութիւնն սկսում է 1887 թուին: Առաջին անգամ Տիգրան Նազարեանի «Եդիւր»ում լոյս են տեսնում նրա «Երեւ Վարդ»ը, ա-

յա՛ «Մանկութիւն», «Սալլուրի երգը» եւ ուրիշ երգեր: 1897 թուին Թիֆլիսում լոյս է տեսնում նրա «Առանց լաւերի» լիբիկ ոտանաւորների ժողովածուն. սակայն այդ էլ նրան չի բաւարարում եւ նա գրում է իր գլուխ գործոցը՝ «Լալուարի որսը» պոէմը, որ առաջին անգամ լոյս է տեսնում 1901 թուին «Մուրն» ամսագրում: Ենթահետեւ նա գրում է մի շարք բանաստեղծութիւններ զանազան պարբերականներում — «Համբաւաբեր» (Թիֆլիս), «Գեղունի» (Վենետիկ), «Երագած (Փարիզ) եւ «Կարմիր ծիւր» (Թիֆլիս): Վերջերս էլ նա առանձին գրքոյններով լոյս ընծայեց խորհրդային կեանքից վերցրած պիէսներ, «Մանուշի Հարսանիքը», «Նոր Դիւղի շէմքին» (արժանացած է Հայաստանի դիւղանախական գեղարուեստական գրականութեան մրցանակին), «Խողտրածի կինը» դիւղական դրամա, իսկ Հայաստանի Պետհրատը հրատարակեց «Լալուարի որսը»: Նա ունի նաեւ մի շարք անտիպ գործեր, որոնցից ուշագրութեան արժանի են. «Եղնիկի Փերի», պոէմ, «Եփրատի կոյսը», պոէմ, «Նոր Սասուններ», ուր երգում է գիտութիւնն ու տեխնիկան, «Ուսուցչի օրագրից», «Կոմսոնայի յաղթանակը», վերջին երկուսը դիւղական պոէմներ են:

Ահա այս է Միրաքեանի Հայ գրականութեան թողած երկերի ամբողջական պատկերը, որի մէջ սակայն կեղծոնական եւ առաջնակարգ տեղ է գրաւում «Լալուարի որսը» վիպական բանաստեղծութիւնը:

3.— Հասարակական միջավայրը եւ ազդեցութիւններ:

Այժմ տեսնենք, թէ Հասարակական ի՞նչպիսի միջավայրի ծնունդ է Վ. Միրաքեանը, ի՞նչ ազդե-

ցութիւններ է կրել նա այդ ճիշտագործից եւ որ պիտաւորն է ինչ աղբիւրներից է ազդուել իր պոէ-
ժը գրելիս:

Վ. Միրաքեանի ստեղծագործութեան հիմնա-
կան առանցքը Լուսուայ Լալուարի լանջերն են, Լալ-
ուարի հասարակական ճիշտագործը: Նրա Աւագը, Ալ-
վարը, Կարօն այդ ճիշտագործի հարազատ ծնունդն
են: Այդ սոցիալական ծնունդաբան էլ ապրել եւ
ներշնչուել է պոէտը:

Բայց դա պատահա-
կան երեւոյթ չէ:

Հայրը լինելով
անասնապահ՝ տար-
ուան ծեծ հասն իր
ընտանիքով անց էր
կացնում Լ. ք., Լալ-
ուար, Լեջան, Ղարա-
խաչ սարերի բար-
ձունքներում եւ Շու-
լավերի Տօփ եւ Կար-
ձիւքար կուսական
անտառներում, որ-
տեղ եւ օրօրում է
պոէտի օրօրոցը եւ
անցնում է նրա ծան-
կութեան եւ պատա-
նեկութեան շրջանը:
Այդ սարերում էլ նա
ծանակցում է քոչ-
ւորների ծառայական
երթին, օրերով անց-
նում է անտառների

ճիշտ, կարաւանների հետ կանգ է առնում սառ-
նորակ աղբիւրների ափին, ախանառեւ է լինում
սարերում շարունակ տեղի ունեցող բուրակուր-
ւին, աղջիկ փախցնելու վրիժառութիւններին, սար-
ւորների եւ բէկերի ընդհարումներին: Դիտում է
նա սարւորների քրտնոտները, ծառայական որսերը,
լսում է թափառական աշուղների երգերը, հովի-
ների ջվիների լեռնային անուշ ձեղեղները: Այդ
բոլոր տեսարաններով նա խորապէս ապրում է եւ
սպաւորում... Բռանձնապէս նրա երեւակայու-
թեան վրայ ուժեղ եւ անջնջելի հեռքեր են թող-
նում լեռնային սքանչելի եւ հարուստ բնութիւնը,
գիւղացիների եւ սարւորների կենցաղը, Ղարախաչի

բարձունքների առաջ տարածւող Փարխանա լիճը,
վերջալոյսի կախարդիչ տեսարանները:

— Ես շարունակ բարձրանում էի սարերի կա-
տարները, — ասում էր նա ճեղ. — այնտեղից դի-
տում էի հիաւքանչ բնութեան տեսարանները՝
բարձրաբերձ լեռները, կանաչազարդ անտառները,
Բոքչալուի եւ Ղարախաչի տափաստաններն ու ս-
րտները, կանաչ ֆոնի վրայ նկարող ոչխարների

ու գառների հօտերը,
խիւ աւելի հեռուն՝
Կովկասի լեռնաշղթան
իր ձիւնազարդ պար-
թեւ գագաթներով, եւ
այսպէս անվերջ ապ-
րում էի կախարդիչ
հորիզոնի հետ»...

Ահա թէ ինչու
նրա պատկերած տի-
պերն ու ճիշտագործը
հարազատ են եւ գու-
նեղ: Ահա թէ ինչու
հարազատ կերպով
ցոլանում է նրա պոէ-
տում նահապետական
կենցաղով ապրող լեռ-
նաբնակների ուրոյն
կեանքը: Այնտեղ են
եւ հովիւները, հով-
ւուհիները, Լալուարի
իգիթները, գիւղացի-
ները: Դուք լսում էք
նրանց երգերը, խօ-



Վ. Ա. Հ. Ա. Ն. Մ. Ի. Ռ. Բ. Ե. Ա. Ն.

սակցութիւնները, ծանօթանում էք նրանց յոյգերի,
ապրումների հետ:

Այդ յետադաս ճիշտագործ, սակայն, վճռա-
կան դեր են խաղում նախապաշարումները, որոնք
թողաւորում են ամենքի վրայ: Մի ամբողջ աշ-
խարհ դալարում է, տարուբերում, ընկնում, լալիս
կախարդական այդ ոլորտի ճէջ: Մի ամբողջ կեանք
բայաքաջում է այդ ախտաւոր շրջանում: Այս բոլոր
ճոճեանները Միրաքեանը գծել է վարպետ վրձինով:

4.— «Լալուարի որո»ի առաջին վարխանս եւ
բանաստեղծ մովն. Թումանեան:

Վահան Միրաքեանի գրական բանաստեղծա-

կան դեմքն աւելի ցայտուն դնելով լուսաբանելու համար՝ պարզենք ձի կարեւոր ճոճենա եւս. ի՞նչ ազդեցութիւնների տակ է գրել նա իր «Լալուարի որս»-ի առաջին վարիանտը:

Բացայայտ է, որ Միրաքեանի բանաստեղծական շնորհքի ձեւակերպման, կաղծակերպման գործում նշանակալից եւ կարեւոր դեր են խաղացել Լուսուայ կախարչիչ բնութիւնը, լեռնային խորխու աշխարհը: Այդ ճիշտվայրից, այդ շրջապատից նա անմիջապէս եւ ուղղակի կերպով շատ բան է վերցրել: Ահա թէ ինչ էր ասում ձեզ այդ ծառին պոէտը.

— Ի՞նչ «Առանց լարերի» լիրիկ ոտանաւորների հրատարակութիւնը չէր բաւարարում ինձ. եւ ես շարունակ թափառում էի իմ ճանկական-պատանեկան ընկեր-լեռների կատարներն ու որոնում ոգեւորութեան նորանոր աղբիւրներ: Եւ ահա ձի օր, Վարդապետի տոնին, կանգնած Լալուարի գագաթին դիտում էի բնութեան գեղատեսիլ պանորաման, ուր ձի կողմից իմ առաջ պատկերանում էին անտառապատ խորհրդաւոր ձորերը, ձիւս կողմից՝ երփնեւանդ ծաղիկներով զարդարուն ալպիական հսկայ բարձունքները: Լայնածառայ եւ բազմեղանգ սելեւէֆներով հիացած՝ բացազանչեցի. «Ա՛հ, այսքան էլ գեղեցկութիւն, որ ես ճաշակում եմ, ձի՞թէ չի կարելի երգել, որ բոլորն էլ ճաշակեն... Եւ բռնկեց իմ ձեռք գեղարուեստական հրաբուխը. այս անգամ ոչ թէ առանց լարերի, այլ հնչուն ու գունեղ մօտիւններով, եւ բանաստեղծական նոր թափով սկսեցի պատկերել բնութեան հրաշալիքները ու կառուցի «Լալուարի որս»-ի առաջին վարիանտը:

1898 թուին բանաստեղծ Յովհաննէս Թումանեանը Եռլավերում եղած ժամանակ ուսուցիչ Սրշակ Չորանեանից լսելով այդ վարիանտի ծառին, գալիս է նրա հետ Վահան Միրաքեանի սենեակը եւ կարդալ տալիս: Առաջաբանի ընթերցումից յետոյ նա բացազանչում է. «Եթէ կաթնայի խուփը այսքան գեղեցիկ է, ապա ձեռքի կերակուրն ինչքան համեղ կը լինի»: Իսկ պոէտի ամբողջական ընթերցումից յետոյ տետրակի վրայ ծակագրում է.

«Սիրեցի, Կոնօ, քո անուշ երգը.

Թող Աստուած օրհնի Գուգարի բերքը (1):

(1) «Լալուարի որս»-ի առաջին այդ վարի-

Այս ծակագրութիւնը կատարում է այն ժամանակ, երբ դեռ եւս լոյս չէր տեսած «Անուշ»-ի ձեւակերպող հրատարակութիւնը: Հէնց այդ պատճառով փաստն էլ գալիս է հերքելու, փարատելու այն թիւր կարծիքը, որ իշխում է ձեր գրական աշխարհում եւ Լէօի «Ռուսահայ գրականութիւնը» պատմութեան ձեռք, իբր թէ «Լալուարի որս»-ը գրելիս, Միրաքեանը զանուել է ձի որոշ չափով Թումանեանի ազդեցութեան տակ:

Մեր ասածն աւելի է հաստատում հետեւեալ բնորոշ փաստը. 1901 թուին Յովհաննէս Թումանեանը «Լալուարի որս»-ի երկրորդ ձեւակերպող վարիանտը վերցնում է Միրաքեանից Մուրնում տպելու համար: Երեք ամիս ֆուտ է Թումանեանի մօտ, ապա հեղինակից անկախ կրճատումներով, լոյս է տեսնում Մուրնում. ապա առանձին գրքոյկով (1): Այդ օրումնից էլ Վ. Միրաքեանը գրաւում է գրական շրջանների եւ հասարակութեան ուշադրութիւնը:

5.— Վահան Միրաքեանի կեանքը

Վ. Միրաքեանի ամբողջական պատկերը վեր-ձինելու համար գծենք նրա կեանքի թէկուզ համառօտ նկարագրութիւնը, ամփոփ ուրուագիծը եւս:

Նա ծնուել է Եռլավերում (այժմ Եւհուճեան) 1866 թուին: Հայրը եղել է անասնապահ: Պատանեկան շրջանից նա սիրել է ձեռնակութիւնը: Երեւոյնքը նրա ձեռնութեան ձեռք թափառումները վերագրում են աննորմալութեան եւ բժշկելու համար դիմում են մոլլաներին ու զբոսայիտներին: Նոյն իսկ նրանց զրած թելիսները ջրի ձեռք գցելով՝ առաջարկում են ջուրը խփել. իսկ զգեստի տակից գաղտնի կարում են թելիսմաւոր գրեթէ Բայց նա

անցր, Յովհաննէս Թումանեանի մակագրութեամբ, գտնուում է Երեւանի Պետական բանգարանի պատմագրական բաժնում, դրուած է Սայաթ-Նովայի եւ Աւուղ Զիւանիի պահաւանում: Ա. Եր.

(1) «Լալուարի որս»-ի նախաբանը եւ առաջին գործողութեան Ա. պիւսկերը երաժիշտ Ն. Դալանդեւեանը ձայնագրել է օպերա եւ դարձրել. որն առաջին անգամ բեմադրել են Թեմանում (ՏԵՄ, «Գաղափար» 1927 թ., No. 7:

կոտորում է բաժակը եւ պոկում կարուած գրերը։ Այդ դրութիւնը շարունակուած է նրա ճինչեւ դպրոց յաճախելը։ Դժուարները նրան իր եղբայրների հետ ուղարկում են գիւղի դպրոցը, ուր նրա վրայ ճեմ աղղեցութիւն է դրածու իր ժամանակին յայտնի պրուդոնիստ եւ լեզուագէտ Գրիգոր Տէր-Մելիքեղեկեանը, որ ինքնաշխատութեամբ բաղձակողմանի կրթութիւն է ձեռք բերում եւ ձարիզմի շրջանում դատարաններում բողոքովին ձրի պաշտպանում «քեռտիր» գիւղացիների իրաւունքները։ Ուսուցչի աշխատասիրութիւնը եւ նրա դէպ ի կեանքի գիւղացիներն ունեցած սէրը Միրաքեանի վրայ անջընջելի հետքեր են թողնում։ Նրա աղղեցութեան տակ էլ նա իր առաջին ստանաւորները գրում է այդ ուղղութեամբ, ինչպէս՝ «Սալլորդի երգը», «Պանդկտի հրաժեշտը» և այլն։

Այնուհետեւ նա ծանում է Թիֆլիսի «Արհեստաւորաց դպրոցը», այնտեղից անցնում է «Տեխնիկական» ճիշնակարգ ուսումնարանը, ապա՝ «Ուսուցչական ձեմարանը», ուր 1888 թուին աւարտելով՝ նուիրում է ուսուցչական ասպարէզին։ Ուղիղ 41 տարի պաշտօնավարում է նա Անդրկովկասի դանազան քաղաքներում ու աւաններում (Ստեփանաւան, Նուխի, Նոր-Նախիջեւան, Թիֆլիս, Էջմիածին, Գեորգեան ձեմարան, Երեւան) եւ գլխաւորապէս Շուլավերում։

Հետաքրքրական է նրա Էջմիածնայ Գեորգեան ձեմարանի պաշտօնավարութեան շրջանը։ Ուսանողները տեսնելով նրա ընկերական վերաբերմունքը ամենասերտ կերպով կապում են նրա հետ։ 1894 թ. ուսանողները չլիմանալով ձեմարանի փակ, կղզիացած ընթիմին՝ ըմբոստանում են վարչութեան և ուսուցչական կադմի դէմ, որի հետեւանքով արտաքսում են 90 ձեմահասակ ուսանողներ (նրանցից այժմ ապրում են Պօղոս Երէկեան, Սրաժ Զարբ, Դերենիկ Դեմիրջեան, Շահմուրատեան (երգիչ), Արշակ Աթայեան)։ ձեմարանի վարչութիւնը հայածում է նաեւ Միրաքեանին, համարելով նրան խռովութեան գործակից, հիմք բռնելով ուսանողութեան նրա հետ ունեցած կապը։ Վաղարշապատի ոստիկանապետը խռովարար ուսանողների անուանացույցը յանձնելով Միրաքեանին, առաջարկում է ձեմարանի վերին յարկից ցած բերել եւ յանձնել ոստիկանութեանը, բայց նա հրաժարում է եւ ընդմիշտ հեռանում ձեմարանից։

Այժմ նա ապրում է Երեւանում եւ դբադում գրականութեամբ։ Առանձնապէս ճշակում է «Եղնիկի Փերի» ձեմ պոէմը (1)։

ԱՐԸՄ ԵՐԵՄ ԵԱՆ

Թիֆլիս

★ ★ ★

ԱՆՏԻՊ ԿՏՈՐՆԵՐ

ՎԱՀԱՆ ՄԻՐԱՔԵԱՆԻ
“ԼԱՆՈՒԱՐԻ ՈՐՍԸ” ՔԵՐՓՈՒԱԾԷՆ (*)

Երգում են, խնդում, հազար բերանով
Հայուարի վիթխար հասակը գովում։

— Հէ՛յ, ջան Հայուար, էլի բարով —
Մուրժ ձորերով, մով լեռներով,
Հազար ծաղկանց անուշ բոյրով,
Բիւրիւններով — էլի բարով։

Գարունը զառ նոր է եկել —
Աղբիւր, առուն զիլ կարկաջում։
Ալ ու ալման շոր ես հագել,
Ամէն կողմից հիւր ես կանչում։

Թուխ ամպերով ծով երկնքում,
Թմրակները մեծ խնջոյքի
Որոտներով գովքն են երգում
Գարնան անուշ հարսանիքի։

(1) 1924-5—1928-9 տարեգրանում, որպէս վարիչ (սեռուչ) պատշոնավարում էինք Երեւանի Քաղաքապետի «Ձերմիսկու» անուան բարձր խիւղի դպրոցում։ Այդ քաղանում Վ. Միրաքեանը բարձր խմբերում դասաւանդում էր Հայոց լեզու։ Իբրեւ մանկավարժ նա հմուտ էր եւ բարեխիղին։ Կարողանում էր դասաւանդուրիւր դարձրել հետաքրքիր եւ մասշնի, իսկ շնորհիւ իր քննեական վերաբերմունքի ստեղծել էր սերս կապ ուսանողութեան, ուսուցիչների եւ վարչութեան հետ։ Ա. ՆՐ.

(*) Վահան Միրաքեանի «Հայուարի որս»-ի անխիւղ այն երգերը, որոնք պոէսից անկախ պատշոններով լոյս չեն տեսել պոէմի սկզբնական հրատարակութեան ժամանակ։